

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ  
ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ  
ԷՂ. ԱՂԱՅԱՆԻ

Հայերենը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը անցել է զարգացման տարբեր փուլեր, որոնց ընթացքում երևան է եկել տարբեր դրսևորումներով՝ նախագրային հայերեն, գրաբար, միջին հայերեն, բարբառներ, աշխարհաբար՝ գրական լեզվի երկու տարբերակներով՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Այդ պատմական զարգացման ընթացքում այն մշակվել ու կատարելագործվել է՝ համալրվելով հնդեվրոպական հիմք լեզվի, գրաբարի, միջին հայերենի, հսկայական թվով բարբառների (ավելի-քան 40), մի շարք օտար լեզուների, ինչպես նաև՝ նոր շրջանի բառերով, որի շնորհիվ այսօր մեզ է ներկայանում պատկառելի և հարուստ բառապաշարով:

Բառապաշարը լեզվում եղած բառերի ամբողջությունն է: Այն զարգացման և փոփոխման բարդ ընթացք ունեցող պատմական կարգ է, որն ընդգրկում է բառային այլևայլ շերտեր, այդ իսկ պատճառով ոչ միայն հայ, այլև համաշխարհային լեզվաբանության մեջ բառապաշարը դասակարգում են՝ հիմք ունենալով տարբեր սկզբունքներ ու չափանիշներ, որոնց մեջ կարևոր, երբեմն նույնիսկ առաջնային տեղ է հատկացվում ծագումնաբանական սկզբունքին:

Ծագումնաբանական դասակարգման դեպքում բառապաշարը խմբավորվում է ըստ բառերի ծագման աղբյուրների:

Այս մոտեցմամբ արդի հայերենի բառապաշարում հետաքրքիր շերտեր է առանձնացրել Էդուարդ Աղայանն իր գիտական մեծաթիվ աշխատություններից երկուսում՝ «Արդի հայերենի բացատրական բառարանի առաջաբանում և «Ընդհանուր և հայկական բառագիտությունում»<sup>1</sup>:

«Արդի հայերենի բացատրական բառարանի առաջաբանում եղ. Աղայանը, հստակ տարբերակելով ժամանակակից հայոց լեզու և արդի գրական հայերեն եզրերը (տերմինները) (դրանցից առաջինը վերաբերում է միայն գրական արևելահայերենին, իսկ երկրորդն ավելի լայն սահմաններ ունի և ընդգրկում է թե՛ արևելահայերենը, թե՛ արևմտահայերենը), վերջինից բառապաշարում ըստ ծագման առանձնացնում է «բառամթերային» յոթ շերտ:

<sup>1</sup> Տես Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ1, հ2, Եր. 1976, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984:

Հաջորդ, իր բառագիտական հետազոտությունների հանրագումարը հանդիսացող «Ընդհանուր և հայկական բառագիտություն»՝ աշխատության չորրորդ գլուխն ամբողջովին նվիրելով ժամանակակից հայերենի բառապաշարին՝ դրա մի հատվածում դարձյալ ծագումնաբանական դասակարգման է ենթարկում բառապաշարը, որը, սակայն, վերնագրում է ոչ թե արդի հայերենի, այլ «ժամանակակից հայոց լեզվի ծագումնաբանական դասակարգություն»<sup>2</sup>:

Արդեն նշել ենք, որ այդ երկու եզրերը հստակ տարբերակման են ենթարկվել իր իսկ կողմից, սակայն դասակարգման մեջ այս տեսակետից որևէ փոփոխություն չկա: Այս դեպքում ևս քննության նյութ են և՛ արևելահայերեն, և՛ արևմտահայերեն բառերը: Արդյունքում արդի հայերեն և ժամանակակից հայոց լեզու եզրերը վերածվում են նույնանիշների (հասկանալի է, որ երկուսն էլ գործածվում են արդի հայերեն եզրի իմաստով):

Ընդհանուր առմամբ դասակարգումներում լուրջ տարբերություններ և հակասություններ չկան: Ղրանք երկու դեպքում էլ զրեթե նույնն են, քանի որ մոտեցման հիմքում նույն չափանիշներն են ընկած: Միակ էական տարբերությունն այն է, որ այստեղ նախորդ յոթ շերտերին ավելանում է ևս մեկը՝ միջինհայերենյան բառաշերտը<sup>3</sup>: Հաշվի առնելով այս փաստը և խուսափելով ավելորդ կրկնություններից՝ ներկայացնում ենք «Ընդհանուր և հայկական բառագիտությունն աշխատությունում տրված դասակարգումը:

Ի՞նչ նկատի ունի Աղայանը բառապաշարի ծագումնաբանական դասակարգում ասելով: «*Բառապաշարի ծագումնաբանական դասակարգությունը*, - նշում է էդ. Աղայանը, - բառերի խմբավորումն է ըստ այն աղբյուրների, որոնց նրանք պատկանել կամ պատկանում են և որոնցից մուտք են գործել աշխարհաբար գրական լեզվի բառային կազմի մեջ»<sup>4</sup> (աշխարհաբար գրական լեզու եզրը նույնպես վերաբերում է թե արևելահայերենին, թե արևմտահայերենին և ունի նույն իմաստը, ինչ որ արդի գրական հայերենը):

Ըստ այդմ՝ նա աշխարհաբար գրական լեզվի բառապաշարում առանձնացնում է ութ շերտեր՝ 1. համահայկական բառեր, 2. համագրական բառեր, 3. միջինհայերենյան բառեր, 4. նոր գրական բառեր, 5. մասնավոր գրական բառեր, 6. հին կամ գրաբարյան բառեր, 7. աշխարհաբարյան բառեր, 8. բարբառային բառեր, այնուհետև տալիս դրանցից յուրաքանչյուրի սահմանումն ու թեթև բնութագիրը:

<sup>2</sup> 1980 թ. Երևանում լույս է տեսնել «Հայոց լեզուն քուհական դասագիրքը, որի բառագիտություն բաժնի հեղինակը էդ. Աղայանն է: Այդ նույնը տպագրվել է 1984 թ. առանձին գրքով Ընդհանուր և հայկական բառագիտությունն վերնագրով:

<sup>3</sup> էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 119:

<sup>4</sup> էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 119: Հաջորդ օրինակներն ու մեքքերումները ևս դուրս են բերվել այս նույն աշխատությունից, ուստի էջը կնշենք դրանց կողքին, փակագծերում:

Համահայկական են կոչվում այն բառերը, որոնք հատուկ են հայերենի բոլոր դրսևորումներին: Ինչպես՝ *ջուր, հաց, մարդ, եղբայր, խոսել, բան, աչք* (էջ 120):

Այս շերտի բառերը բնութագրվում են մի շարք հատկանիշներով՝

ա) հայոց լեզվի բառապաշարի միջուկն են կազմում և հայերենի բոլոր դրսևորումների հիմքն են դարձել:

բ) քանակապես զգալի թիվ են կազմում, որոնց մեծ մասը պարզ (արմատական) բառ կամ որևէ ածանցով պահպանված արմատ է (օրինակ՝ ուտ-ել, ծեռ-ք, հան-ել և այլն):

գ) բառապաշարի ամենակենսունակ տարրերն են և մեծ դեր են կատարում հատկապես բառակազմության մեջ:

Համագրական են գրաբար մատենագրության մեջ գործածված և դրանից նոր գրական լեզվի երկու տարբերակներին ժառանգորդաբար անցած գրական բառերը, ինչպես՝ *ծաղկավառ, զարնանագեղ, արյունարբու, շաղկրատել, վարդապետ, շոշափել, քերական, հյուլե, զանգրահեր* (էջ 121):

Այս շերտի բառերի «առաջնակարգ հատկանիշը», հեղինակի կարծիքով, դրանց բաղադրյալ կազմությունն է: Բացի բաղադրյալ բառերից՝ այս խմբում են նաև պարզ բառերից նրանք, որոնք գրական լեզվին են անցել միայն գրական ժառանգորդությամբ, իսկ աշխարհաբար ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում երբեք էլ չեն գործածվել, ինչպես՝ *իղծ, անուրջ, տենչ, գիրգ, երանգ, դաստակ* (էջ 121):

Համագրական շերտի բառերից բաղադրյալները, ըստ հեղինակի, հաստատապես գրական բառեր են, որը միանշանակ չի կարելի ասել պարզ բառերի վերաբերյալ: Պատճառն այն է, որ բերված պարզ բառերի որոշ մասը գործածական է եղել հին հայերեն խոսակցական լեզվում և գրաբարին է անցել դրանից: Իսկ որպես ասվածի ապացույց նշվում է այն, որ դրանց արմատական ձևերը թեև չկան բարբառներում, բայց փոխաբերված աշխարհաբար ժողովրդախոսակցական լեզվում և բարբառների զգալի մասում առկա են այդ արմատներից կազմված ածականներ և բայեր (ինչպես օրինակ՝ *զարշարմատից զարշել, զարշելի, գյուտ արմատից՝ գտնել և այլն* (էջ 122)):

Ասվածը, սակայն, չի տարածվում այս շերտին պատկանող բոլոր պարզ բառերի վրա, դրանց որոշ մասը մաքուր գրական բառ է, ինչպես՝ *իղծ, գեղմ, գես, լուրթ, բոսոր* (էջ 122):

Փաստորեն, այս խմբի բառերը կարելի է բաժանել երեք կարգի՝ ա) բաղադրյալ կազմությամբ մաքուր գրական բառեր, բ) պարզ կազմությամբ մաքուր գրական բառեր, գ) պարզ կազմությամբ գրական բառեր, որոնք, սակայն, ի տարբերություն վերոնշյալների, մաքուր գրական չեն, իսկ համա-

հայկական բառերի շերտին չեն կարող դասվել, քանի որ հատուկ չեն հայերենի բոլոր դրսևորումներին:

Արդեն նշել ենք, որ էդ. Աղայանը բառարանում տրված նախորդ յոթ շերտերին ավելացնում է ևս մեկը՝ միջինհայերենյան բառերի շերտը (որ մեր կարծիքով լուրջ բացթողում էր): *Այս կարգին են պատկանում այն բառերը, որոնք ավանդվել են միջին հայերենով գրված գրականությանը, որից էլ անցել են աշխարհաբար գրականությանը՝ առավել կամ պակաս գործածականությամբ: Օրինակ՝ մանչ, մանչուկ, աղեկ, ելակ, բեղ, խաթուն, տղեկ, ալոճ, բեկ, ճորտ, կտրիճ (էջ 122):*

Այս շերտի բառերն իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝

ա) իսկական (բնիկ) միջին հայերեն բառեր, այսինքն՝ բառեր, որոնք կամ միջինհայերենյան կազմություններ են, ինչպես՝ *մանրուսում, աղվեսագիրք, դատաստանագիրք, կամ միջինհայերենյան փոխառություններ, ինչպես՝ բեղ, աթաբեկ, մարաջախտ, էլակ, խաթուն:*

բ) բառեր, որոնք ավանդվել են 10-11-րդ դարերից, սակայն իրականում ոչ միջինհայերենյան կազմություններ են, ոչ էլ այդ շրջանի փոխառություններ: Պրանք բնիկ հայերեն բառեր են, որոնք եղել են հին հայերենի ժողովրդախոսակցական, այլ ոչ թե գրական լեզվում (գրաբարում) և միջին գրական հայերենին են անցել ժողովրդախոսակցական լեզվից: Այդպիսի բառեր են, օրինակ, *թուշ, կեռ, կռանայ, կտրիճ*: Առաջին երկուսը՝ *թուշ* և *կեռ*, էդ. Աղայանը անվանում է հնդեվրոպական ծագում ունեցող բառեր, որի ապացույցը դրանց՝ մինչև այժմ շարունակվող կենսունակությունն է բոլոր բարբառներում և գրական լեզվում (գիտենք, որ հայերենի բառապաշարի ամենակայուն տարրերը հենց բնիկ հայերեն բառերն են): Կտրիճ բառը դասել է այս խմբում կազմությունից ելնելով, «*կտրիճ հին հայերեն բառ է իր կազմությամբ, ըստ որում —իճ ածանցը հին հայերենում էլ (գրաբարյան շրջանում) արդեն կենսունակ չէր, իսկ հետագայում բոլորովին վերացավ: Հասկանալի է, որ այդ ածանցով կազմված բառերը պատկանում են հին հայերենին*» (էջ 123):

Չորրորդ շերտում նոր գրական բառերն են, այսինքն՝ բոլոր նորակազմ բառերը, որոնք ընդհանուր են թե՛ արևելյան, թե՛ արևմտյան գրական լեզուներին, *ինչպես՝ սավառակ, հաժանակ, մանրադիտակ, մանրէ, օղանակ* (էջ 123):

Այս խումբը բառային կազմով ամենաընդգրկունն է, քանի որ լեզուն զարգացող երևույթ է, և այդ զարգացումը տեղի է ունենում նոր բառերով հարստանալու շնորհիվ:

Հինգերորդ խմբում արդեն մասնավոր գրական բառերն են՝ միայն գրական արևելահայերենին կամ գրական արևմտահայերենին հատուկ նոր գրական բառերը:

Այս շերտի բառերը ի տարբերություն նախորդ խմբերի բառերի, ընդհանուր չեն աշխարհաբարի երկու ճյուղերի համար: Ըստ այդմ էլ նույն առարկան, երևույթը, հատկանիշը և այլն անվանելու համար ունենք երկու տարբեր բառեր, որոնք կազմում են բառային գույգերե, ինչպես՝ *հաղթաթուղթ-հաղթաքարտ, ծրագիր-հայտագիր, հեռախոս-հեռաձայն, հեռուստացույց-հեռացույց, պաղպաղակ-սառնանույշ* (էջ 124):

Վեցերորդ շերտում աշխարհաբարյան բառերն են. այն բոլոր բառերը, որոնք գրական լեզվին են անցել ժողովրդախոսակցական լեզվից: Օրինակ՝ *մատղաշ, ձգմել, թոնթորալ, բոթել, լոք (տալ), կուլ (տալ), մկրկալ, մուգ, շիվ, պլալալ, փիփերթ* (էջ 124):

Այս շերտի մեջ են մտցվում նաև միջինհայերենյան կարգի այն բառերը, որոնք եղել են հին հայերենում (թուշ, կեռ, կռանալ, կտրիճ):

Յոթերորդ շերտն են կազմում հին կամ գրաբարյան բառերը, օրինակ՝ *կորուսիչ, կույրզկորյան, հոգնաբեղուն, ծիաղադման, ծիծաղախիտ, կորովամտություն, կարշնեղ*: «Այս բառերը տարբերվում են համագրական բառերից նրանով, որ վերջիններս աշխարհաբար գրական լեզվին են անցել պատմականորեն, գրական ժառանգորդությամբ, մինչդեռ հին կամ գրաբարյան բառերը ժառանգորդությամբ չեն անցել, այլ պարզ փոխառությամբ» (էջ 125):

Այսպիսով, այս բառերն ու համագրական բառերը նույնանում են իրենց ծագմամբ, տարբերվում՝ գրական լեզվին ժառանգորդաբար անցնելով և չանցնելով: Սրանք, փաստորեն, գրաբարյան փոխառություններ են, որոնց մեծ մասը գրական հայերենում գործածվում է որպես որևէ բնագավառի եզր (օր.՝ պարեկ, կոպարային): Էդ. Աղայանը սրանց կարևոր հատկանիշը համարում է ոչ թե այն, որ դրանք գրաբարյան բառեր են ըստ ծագման, այլ այն, որ պատմականորեն դուրս են եկել գործածությունից, հետագայում, սակայն, փոխառվելով, դարձյալ մտել գործածության մեջ:

Այս շերտի մեջ են դասվում այն բարդությունները, որոնք կենսունակ չեն եղել գրաբարի ուշ շրջանում և վաղ աշխարհաբարում: Ինչպես՝ *հոգն-հոլով- (գրաբարյան յոլով՝ «շատ»), տեսակ (որպես վերջին բաղադրիչ, որ նշանակում է «կերպ, ծև, նման»), ճարակ- բաղադրիչներով կազմված բառերի մեծ մասը (հոգնաբեղուն, հոգնախոնջ, հոլովաբան, հոլովամարդ, օդատեսակ, լուսատեսակ, խոզաճարակ, բոցաճարակ)* (էջ 127):

Իր ապրած ժամանակից դիտարկելով այս բառերը՝ Էդ. Աղայանը համարել է, որ դրանք նոր գրական լեզվում կենսունակ դառնալու կարողու-

թյամբ են օժտված: Սակայն այսօր արդեն պարզ է, որ այս բառերը ոչ միայն չեն կենսունակացել, այլև ընդհանրապես դուրս են մնացել արդի գրական հայերենի բառապաշարից:

Հատկանշական է նաև այն, որ հեղինակը սրանցից սահմանազատում է այն բառերը, որոնք թեև ձևով նմանվում են գրաբարյան բառերին, բայց ոչ թե այդ շրջանից կատարված փոխառություններ կամ ժառանգորդաբար նոր լեզվին անցած բառեր են, այլ գրաբարյան հին ձևին համանուն նոր բառեր: Ինչպես՝ *հոգեծին* գրաբարում նշանակել է «հոգով ծնող՝ ծնված», իսկ աշխարհաբարում նշանակում է «հոգեկան ծագում ունեցող», կամ՝ *մարգավան* գրաբարում նշանակել է «մարգպան», աշխարհաբարում՝ «մարգական ավան»: Այսինքն՝ այս բառերը ոչ թե վերցվել են գրաբարից և գործածվում են նոր իմաստով, ինչպես իմաստափոխության պարագայում է, այլ նոր կազմություն ունեն: Սրա հետևանքով էլ առաջացած համանունները լեզվի ներկա փուլում, համաժամանակյա մոտեցմամբ որպես այդպիսին գոյություն չունեն, քանի որ հին ձևը գործածական չէ և արդի հայերենի բառապաշարի մաս չի կազմում:

Ութերորդ շերտի մեջ են մտնում բարբառային այն բառերը, որոնք գործածվել են միայն բարբառներում, ինչպես՝ *չմուշկ, գետնանուշ, սելավ, դահուկ, սիկ, սգնի* (էջ 128): Սրանց թիվն, ըստ էղ. Աղայանի, շատ քիչ է, քանի որ դրանցից դուրս են մնում գրական բառերի բարբառային տարբերակները (հէր, լիս, օխտը, արին) և բարբառների մեծագույն մասի կամ բոլորի, հետևաբար և ժողովրդախոսակցական լեզվի համար ընդհանուր բառերը՝ *ձգմել, ճղել, էտ, էտել, պողշ, ծամփա, յար, չորբան* (էջ 128) (այս բառերը հեղինակը մտցնում է աշխարհաբարյան շերտի մեջ): Այսպիսով, էղ. Աղայանն արդի գրական հայերենում բարբառային է համարում այն բառերը, որոնք անցել են գրական հայերենին մեկ կամ մի քանի բարբառներից (այսինքն՝ բառը ընդհանուր է եղել միայն սահմանափակ թվով բարբառների համար) և դարձել դրա սեփականությունը, իսկ բոլոր կամ գրեթե բոլոր բարբառների համար ընդհանուր բառերը մտցվել են ժողովրդախոսակցական՝ աշխարհաբարյան բառերի շերտ:

Եվ վերջապես, գաղտնիք չէ, որ հայերենի բառապաշարը հարուստ է փոխառյալ բառերով. ի՞նչ մոտեցում է ցուցաբերում էղ. Աղայանը դրանք դասակարգելիս: Ի տարբերություն այլ լեզվաբանների (Հր. Աճառյան, Գ. Սևակ), որոնք փոխառությունները ծագմամբ բառերի առանձին խումբ վերցնելով, դրանք դասակարգում են՝ հիմք ունենալով և՛ հայերենին անցնելու ժամանակը, և՛ փոխառու լեզուն, էղ. Աղայանը փոխառություններն առանձնացնում է ըստ լեզվին անցնելու ժամանակաշրջանի և մտցնում վերոնշյալ բառաշերտերի մեջ: Մի կարևոր հանգամանք ևս, այստեղ խոսվում է միայն

արդի գրական հայերենի բառապաշարում գործածական և կենսունակ փոխառյալ բառերի մասին:

Ըստ այդմ՝ համահայկական բառերի կարգին են պատկանում՝ 1. մինչգրաբարյան շրջանում կատարված այն փոխառությունները, որոնք կենսունակ են եղել գրական լեզվի բոլոր փուլերում և բարբառներում, օրինակ՝ *մանուշակ, հրաման, ծուր, ոչխար*, 2. գրաբարյան դարաշրջանում կատարված այն փոխառությունները, որոնք գործածվել են գրաբարում և ապա փոխանցվել ինչպես բարբառներին ու աշխարհաբար ժողովրդախոսակցական լեզուներին, այնպես էլ գրական լեզվի երկու տարբերակներին: Ինչպես *թատրոն, զմուռ, եպիսկոպոս, կիրակի, մեռոն* (էջ 120):

Համագրական բառերի շերտին են պատկանում գրաբարում գրերի ստեղծումից հետո կատարված գրական փոխառությունները, որոնք կենսունակ են եղել գրաբարում, կենսունակ են նաև նոր գրական լեզուներում, ինչպես՝ *փիլիսոփա, հյույն, գեփյուռ* (էջ 121):

Միջինհայերենյան բառաշերտին են պատկանում այդ շրջանում կատարված փոխառությունները, ինչպես՝ *բեղ, աթաբեկ, մարաջախտ, ելակ, խաթուն* (էջ 122):

Նոր գրական բառերի շերտին են պատկանում երկու գրական լեզուների համար ընդհանուր նոր և նորագույն շրջանում կատարված փոխառությունները, ինչպես՝ *միլիոն, մաշար, սիմվոլ-սիմբոլ, սովետ-սովիետ, ակադեմիա* (էջ 123):

Մասնավոր գրական բառերի խմբին են դասվում «այն նոր փոխառությունները, որոնք, տարբեր աղբյուրներից փոխառված լինելով, տարբեր էլ ծն ունեն յուրաքանչյուրում, ինչպես և նրանք, որոնք, մեկում գործածվելով, մյուսում փոխարինվել են հայակազմ բառով, ինչպես՝ *բուֆետ-այուֆե, սպորտսմեն-սբորթսմեն, սինդիկատ-սենտիքա, տանկ-հրասայլ, կապիտալիզմ-դրամատիզություն, մինիստր-նախարար, անսամբլ-համույթ* (էջ 124) (բերված զույգերի առաջին անդամները վերաբերում են արևելահայերենին, երկրորդները՝ արևմտահայերենին):

Աշխարհաբարյան բառերի խումբ են մտնում բարբառներից և ժողովրդախոսակցական լեզվից աշխարհաբար գրական լեզվին անցած փոխառությունները, ինչպես՝ *ջան, գոգալ, փողրաթ, չայ, լիմոն, չարուխ և այլն* (էջ 124):

Մնացած երկու՝ հին կամ գրաբարյան և բարբառային բառերի շերտերում հեղինակը փոխառություններ չի մտցնում: Գրաբարյան շրջանի փոխառյալ բառերն արդեն զետեղված են համագրական բառերի շերտում, իսկ բարբառային շերտի փոխառությունները՝ աշխարհաբարյան բառերի շերտում:



Այս մոտեցումը, թերևս, այնքան էլ ճիշտ չէ, որովհետև հին կամ գրաբարյան բառերի մեջ կարող են լինել այնպիսի բառեր, որոնք այդ շրջանում կատարված փոխառություններ են, սակայն ժառանգաբար չեն անցել գրական լեզուներին, այլ գործածվել են որոշ ժամանակ անց, ինչպես այդ խմբի մյուս անդամները: Բարբառային բառերում ևս կարող են լինել այնպիսի բառեր, որոնք, փոխառվելով օտար լեզուներից, գործածվել են մեկ կամ մի քանի բարբառներում, այսինքն՝ փոխառողները եղել են հենց այդ բարբառները, որոնցից էլ անցել են գրական լեզվին:

Ավարտելով արդի հայերենի բառապաշարի ծագումնաբանական դասակարգումը՝ հեղինակը նշում է, որ այդպիսի դասակարգում առաջին անգամ է կատարվում, որը «*ցույց է տալիս աշխարհաբար գրական լեզվի բառապաշարի պատմական աղբյուրները և դրանցից յուրաքանչյուրի տեղը մեր լեզվի բառապաշարի զոյացման կամ կազմավորման մեջ՝ անկախ բառապաշարի մեջ տեղի ունեցող տեղաշարժերից և անկախ ժամանակային սահմաններից*» (էջ 129): Ըստ այդմ՝ նա արդի գրական հայերենի բառապաշարի կազմավորման հարցում «առաջնակարգ» տեղը հատկացնում է համահայկական, համագրական և նոր գրական բառերին:

Իրոք որ բառապաշարի այսպիսի դասակարգում առաջին անգամ է կատարվել հայ լեզվաբանության մեջ: Այն ամբողջությամբ վերցրած հետաքրքիր է, բայց, այնուամենայնիվ, ունի թերի կողմեր:

Նախ այն, որ արդեն նշել ենք ժամանակակից հայոց լեզու և արդի հայերեն եզրերի վերաբերյալ, ապա՝ եղ. Աղայանը առաջ է քաշում մի տեսություն, որն ավարտուն ու վերջնական չէ և հիմքում բավարար քանակով փաստական նյութ չունի («*Դասակարգման մեջ ներկայացված կարգերը, -ասում է եղ. Աղայանը,- նույնպես վերջնական սպառիչ համարել չի կարելի, հնարավոր է այդ կարգերի բնութագրությունը փոխել և ավելացնել դրանց թիվը կամ պակասացնել*») (էջ 132): Դրա հետևանքով էլ առաջանում են որոշ երկվություններ, ինչպես, օրինակ, 10-11-րդ դարերից ավանդված բառերը (տե՛ս վերևում), որոնք զետեղվել էին միջինհայերենյան շերտում, չգիտես ինչու, դասվում են նաև աշխարհաբարյան բառաշերտում, արդյունքում ընթերցողին այդպես էլ անհայտ է մնում, թե՛ ի վերջո դրանք ո՞ր շերտին են պատկանում: Այնուհետև՝ թե բառարանի առաջաբանում, թե «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատությունում դասակարգումն անվանում է ծագումնաբանական կամ պատմական (տե՛ս Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ IX, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 129): Այստեղ ևս առաջանում է տերմինային նույնանշություն, այսինքն՝ աւատմանւան և ծագումնաբանական եզրերը նույնանում են: Սակայն պետք է



նկատի ունենալ, որ այս դասակարգումը կատարելիս դրանք դեռ որոշակիորեն, իսկ ավելի ստույգ, ընդհանրապես տարբերակված չէին, բացի այդ՝ այդ եզրերի նույնացման պատճառ է նաև համաժամանակյա մեթոդի կիրառումը, ուստի դրանց նույնանշությունը կարելի է հասկանալ: Այդուհանդերձ, պարզ է, որ եղ. Աղայանը բառապաշարը դասակարգել է ըստ դրանում եղած տարրերի՝ պատմական այս կամ այն շերտերին պատկանելու, սակայն ավելի շուտ անվանել է ծագումնաբանական դասակարգում, քան՝ պատմական:

Այսպիսով եղ. Աղայանի դասակարգման առավելությունն այն է, որ արդի գրական հայերենի բառապաշարում առաջին անգամ են համաժամանակյա մոտեցմամբ առանձնացվում ծագումնաբանական կամ պատմական շերտեր: Բացի այդ, այս դասակարգումը կարևորվում է նախևառաջ նրանով, որ մինչև եղ. Աղայանն աշխարհաբար գրական հայերենի բառապաշարը երբևէ չի ենթարկվել պատմական շերտատման, որն այդ ժամանակի համար արդիական խնդիր է եղել: Այնուհետև՝ սրանով եղ. Աղայանը հիմք է դնում հայերենի բառապաշարի ևս մեկ կարևոր դասակարգման: Հետագայում հայերենի բառապաշարի պատմական շերտերն առանձնացնելիս, ըստ էության, հենց այս դասակարգումն է հիմք ընդունվել: Եվ, որ նույնպես էական է, նշված երկու եզրերն այսօր այլևս նույնիշներ չեն. հայ լեզվաբանության մեջ գոյություն ունեն բառապաշարի ինչպես ծագումնաբանական, այնպես էլ պատմական դասակարգում հասկացությունները:

Այսպիսով, ներկայումս ժամանակակից հայերենի բառապաշարը պատմականորեն դասակարգելիս կամ պատմական շերտատում կատարելիս որպես հիմք ընդունվում է եղ. Աղայանի այս դասակարգումը, և ժամանակակից հայոց լեզվի բառապաշարում առանձնացվում են հետևյալ պատմական շերտերը՝ 1. գրաբարյան բառեր, 2. միջին հայերեն բառեր, 3. բարբառային բառեր, 4. արևմտահայերեն բառեր: Ընդ որում՝ Աղայանի առանձնացրած համահայկական բառերը վերանվանվել են ընդհանուր հայերեն բառեր և մտցվել գրաբարյան բառերի շերտ՝ որպես առանձին ենթախումբ<sup>4</sup>: Իսկ ծագումնաբանորեն դասակարգելիս, հիմք ընդունելով Հր. Աճառյանի դասակարգումը<sup>5</sup>, հայերենի բառապաշարում առանձնացվում են բնիկ և փոխառյալ բառեր (որոշ դեպքերում ծագումնաբանական առանձին խումբ է համարվում նաև Գ. Սևակի առանձնացրած ստացվածքային բառաշերտը<sup>6</sup>: Ըստ Գ. Սևակի Ստացվածքային են այն բառերը, որոնք հայերենին են անցել հնում հայերին ծուլված ազգերի կամ ժողովուրդների (լեզուներից):

<sup>4</sup> Տես, Ա. Սուքիասյան, ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999, էջ 144:

<sup>5</sup> Տես, Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ 1, Եր., 1971, առաջաբան, էջ 11:

<sup>6</sup> Տես, Գ. Սևակ, ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 109-113: